

ՆԵՐՔՈՂԵԱՆ ԶԱՔԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՍԱՑԵԱԼ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Նոր երկին և նոր երկիր: Այսօր յերկրի հաստատեցաւ գերեզման Փրկչին մերոյ: Նոր երկինք և նոր սքանչելի զարմանք, քանզի տեղին այն լայնագոյն ցուցաւ՝ քան զհաստատութիւն երկնից, զի ի հաստատութեանդ՝ լի և պատարուն նովաւ ընդհանուր ամենայն արարածք, և ոչ թողլով զերկինն վերին և զերկիրս լրիւ, իսկ աստ Աստուածութիւն հանդերձ մարդկութեամբն տարեալ եղև: Եւ ընդարձակագոյն ցուցաւ քան զհաստատութիւն անշափ լայնութեամբ երկնից: Քանզի յայսմ աւուր տարաւ զանճառելին խորհրդով՝ զոր ոչ կարեն տանել հաստատութիւնք երկնից: Քանզի յայսմ աւուր վերնոցն և ներքնոցս առ հասարակ ցնծութիւն ուրախութեան: Այսօր աստուածունակ և մերտկերպ տօնիւս՝ իբրև ի դրախտ աստուած ընկալ՝ ընթանամք ի գերեզմանն: Սա իսկ ի յերկրի երեւալ ցուցանի՝ որպէս երկինք: Գերեզման նեղագոյն, և աթոռ բարձրագոյն: Տապանակ փոքրագոյն և հաստատութիւն մեծագոյն: Ներխմ մեռելոյ և յարութիւն մեռելոց: Ընդունող մարմնոյ և աւերող դժոխոց: Տեղի մթոյ և լուսատու խաւարելոց: Քանզի երէկ ի ձեռն խաչին՝ խաւարեցաւ արեգակն ի վերայ ամենայն տիեզերաց: այսօր ի ձեռն գերեզմանին լուսաւորեցան ամենայն հաւատադէտք: Երէկ խաչն մահ աւանդեաց երեւալ մարդոյն, և մահն նորա՝ մեռելոցն կենդանութիւն շնորհէր: Այսօր գերեզմանն զկենդանի զինուորսն մահացուցանէ, և զյարութիւն՝ յուրիոնից մեռելոցն աւետարանէ: Երէկ խաչն բարձրանալով ի Գողգոթայ՝ ի բարձրուանդակն տեղւոյ, զուգ հանրատարածօ տիւրէր բոլորից արարածոց, այսօր գերեզմանն փակելով ի ստորին վայրւոյ զուրախութիւնս համասփիւռս մատուցանէ: Երէկ մահն զօրացեալ՝ ըստ իւրումն բարուց կլանել կամէր զկեանքն տիեզերաց, այսօր կեանքն աճապարեալ զօրեղագոյն փայլաւորակ մամբ՝ զմահն մեռուցանէ և զմեռեալսն կենդանացուցանէ: Ո՞վ մեծի հրաշիցս և ամենազբանչ քաջամարտութեանս հանդիսի, զի մահն կոմեղլով ստանալ, զոր ոչն էր իւր, և ըմբռնել զայն՝ որոյ ըմբռնիլն էր անհնարին, ահա՛ յաղթահարեցեալ և կորագլուխ լեալ՝ և զոր ունէրն կորուստնէ: Քանզի հրացեալն

աւուրքը չարութեան և ծառայն անհաւտարիմ՝ զաւանդ-
 Ցեռուն ինքեան առնելով և զանմեղսն խաբելով՝ և մոլորեցու-
 ցանելով՝ ոչ շատացեալ յաւել ևս ձեռնարկել ի Տէրն աւան-
 դին՝ կամելով և զնա ըեդ ձեռամբ ածել։ Վասն որոյ յարու-
 ցեալ մանուկն Դանիէլ իրաւամբ խայտառակեաց, և ազատե-
 լով զ՛ ի մահ մատնեալսն ի ձեռաց նորա, զնոյն բռնացեալն՝ կա-
 պեալ էարկ ի բանտն անզերծանելի՝ պահելով յաւիտենականի
 կորստեան։ Երէկ մեղաւորքն անիրաւ դատաստանօք ի մահ
 վճռեցին զայն՝ որ անմեղն և անմահն էր բնութեամբ։ Այսօր
 նոյն վճռեցեալն ի մահ արդարակշիռ իրաւամբ զմեղաւորսն
 արդարացուցանէ և զմեռեալսն ի յանապական կեանսն վերա-
 փոխէ։ Ո՛ր սքանչելեացս, արարիչն մեռաւ և արարածքս կեն-
 դանացան։ Ստեղծողն մահացաւ և մահացեալք զանմահու-
 թիւն զգեցան։ Դուստրն վշտանայր և վիշտք նորա նախամօրն
 Եւայի աւետիս մխիթարութեան մատուցանէր։ Զորդին իւր
 միածին ի գերեզման իջեալ, տեսանէր Մարիամ և մեռեալ
 նախամօրն աւետիս մխիթարութեան առձայնէր, և ի միասին
 նախաձօրն և նախամօրն ասէր խանդաղատելի ձայնիւ, դուստրս
 ձեր՝ զուրարիչն ձեր՝ որդի անհայր ծնայ և անմայր երկնաւորն՝
 որդի իմ լինելով զմահ ճաշակեաց։ Եւ արդ սուգ դստերս ձե-
 րոյ, վշտացելոցդ ուրախութիւն աւետարանէ։ Ի գերեզման էջ
 անհայր որդին իմ Յիսուս, և հօր և մօրդ իմոյ՝ որ կայք ի
 գերեզմանի զյարութիւնս աւետարանեսցէ։ Որդիս իմ մեռաւ
 այսօր, ահա՛ զմեռեալսնդ ի կենդանացուցանել ածապարէ։ Ո՛ր
 հարք իմ և նահապետք, ահա՛ ի մեծ տարակուսանս և ի վա-
 րանս անկեալ կամ այսօր միայնակ և խղճալի դուստրս ձեր,
 և ոչ գիտեմ թէ զի՞նչ արարից, քանզի ոչ գիտեմ թէ վշտա-
 ցելոյ մօրս՝ զսուգ յօրինեցից։ Թէ ցնծացելոց հարցդ իմոց զերգս
 խրախականս։ Որդեմեռ ծնողիս զուրս հիւսեցից, թէ որդեկե-
 ցոյց հարցդ զձայնս զուարճարարս։ Ինձ կենդանւոյն մեռելոյ
 մօրս զլացս յարմարեցից, թէ ձեզ ի մեռելութենէ կենդանա-
 ցելոցդ զգուս բերկրականս և ուրախարարս։ Քանզի որդիս իմ
 միակ մեռանելովն այսօր, զիս խղճալի մայրս էարկ ի սուգս ան-
 հնարինս և զձեզ անդրափոխեաց ի յուրախութիւնս անսպառ-
 մելիս։ Միակ որդեակս իմ, որ կախեցաւ ի խաչին որպէս ըզ-
 րարաւորս՝ անտէր և անօգնական, ահա՛ սղապէ զպարտա-

ւորսդ և այցելու լինի անօգնական մնացելոցդ: Ուրեմն թէ-
 պէտ ինձ սգալույ մօրս ողբս՝ վասն զի որդեակս իմ մեռանի,
 սակայն ձեզ ուրախութիւն աւետարանեմ, զի զմեռեալսդ կին
 դանացուցանէ: Ո՞րարմանալեացս, ինքն ի խաչին մեռանէր որ-
 պէս զոկար, և որպէս զամենակարող զհօր սանդարամետն
 դողացուցանէր, զգերեալսն ազատէր, զգերեզմանն բանայր,
 զվէմն պատառէր, և վարագոյր տաճարին ցելոյր: Ո՞րքե քզ-
 մարդ ընդ անօրէնս համարեալ և իբրե զԱստուած՝ զարքայու-
 թիւն անօրինին պարգեւեաց: Ո՞րքե այր մի աղքատ հրեւոռն
 արծաթոյ վաճառեալ և իբրե զԱստուած զմեզ յօրինաց անի-
 ծիցն ազատեաց: Խնդրէր ի Պիղատոսէ Յովսէփ իբրե զայր ա-
 նարգ, և պատէր կտաւով զայն, որ զարգարեաց գերկինս տու-
 տեղօք և զգեցեալն զլոյս իբրե զհանդերձ: Սպասաւորէին նմա
 յաղագս թաղմանն Յովսէփ և Նիկողիմոս, յորմէ սերովքէք և
 քերովքէք սարսափին յահագնաց նորա: Պատէին զնա կտա-
 ւօք մարդիկ հողեղէնք, զոր ոչ կարէին տեսանել հրեշտակք բո-
 ցեղէնք: Եդին զնա ի գերեզմանի որպէս մարդ մեռեալ, որ քզ-
 գերութիւն դժոխոցն որպէս զԱստուած ազատ արարեալ: Շօ-
 շափէին զնա ձեռօք իբրե զմեռեալ՝ մարդիկ երկրաւորք, յորոյ
 Աստուածային լուսոյն ծածկեն գերեսս իւրեանց հրեշտակք
 թեւաւորք: Եդին զնա ի գերեզմանի Յովսէփ և Նիկողիմոս, որ
 դուլալով յերկինս՝ սպասաւորէին նմա տերութիւնք և զօրու-
 թիւնք: Եդին զնա ի գերեզմանի Յովսէփ և Նիկողիմոս, յորմէ
 սարսէին իշխանութիւնք և պետութիւնք: Եդին զնա ի գերեզ-
 մանի Յովսէփ և Նիկողիմոս, զոր ոչ կարէին տեսանել չորեք-
 կերպեան կենդանիքն: Եդին զնա ի գերեզմանի Յովսէփ և Նի-
 կողիմոս, և ասէին վասն մեր իջանես այդր իբրե զմեռեալ, որ-
 պէս զի քե հանցես զնախահայրն մեր ի գոյ անջրդոյ՝ իբրե
 զԱստուած: Վասն մեր իջանես ի գերեզման որպէս պարտաւոր
 և յանցաւոր օրինաց, զի ազատեսցես զմեզ իբրե օրինադիր՝
 ի դատապարտութենէ օրինացն: Վասն մեր իջանես ի գերեզ-
 ման որպէս մարդ ստեղծուած, զի պարգեւեսցես արտաքեւոցս
 զքնակութիւն դրախտին՝ որպէս զԱստուած: Ո՞վ պանչելեացս,
 ի գերեզմանի լիով ընդ մեռեալս գոլով և ի յերկինս ընդ Հօր
 անթերի, և ի դժոխս զհոգիսն ազատէր: Մայրն ի տեսանել
 զնա մեռեալ՝ լայր դառնապէս, և նախամայրն ի դժոխս՝ ի նը-

մանէ կենդանացեալ լինէր: Լայր մայրն Մարիամ զորդի իւր, զարարիչն հօր իւրում, և հայրնորա ի դժոխս տալալէս և ուրախանայր՝ տեսանելով զորդի դստերն իւրոյ՝ զի իբրև զըստեղծող, զապականեալն վերստին ստեղծանէր: Լայր մայրն Մարիամ առ գերեզմանին և լսելի լինէր ի դժոխս ի դոյն: Ձայնէր Եւայ դստերն և ուրախութեամբ պատասխանի բարբառէր յաղագս լալոյն: Լաց ասէ՝ դուստր իմ ցանկալի, արտասուեալ դուստր իմ տիրուհի, դի տրտմութիւն մօրս քո ուրախասցի: Ողբս ծնունդ իմ նազելի, զի ողբալովք քո՝ սուգ իմ մխիթարեցի: Վշտացիր այսօր դուստր իմ ըղձալի, զի լաց և հաւաչանք մօրս քո պակսսեսցի: Քանզի մահ Որդւոյդ քո Աստուծոյ մերս՝ կենդանութիւն պարգևեաց մահացեսպ ծնողացս քո: Գերեզման դուրա զդժոխս աւերեաց: Կտաւ պատանաց դուրա զշղթայս կապանաց մերոց խզեաց: Վէ՛մ գերեզմանին՝ զճիմն բանտին քակեաց: Արտասուք քո՝ զանէծս իմ սպառեաց: Ձայն լալոյ քո՝ զթոյնս վիշապին յականջաց իմոց ջնջեաց: Սուգ քո զարտօսր իմ փարատեաց: Վիշտ քո՝ զտրտմութիւնս իմ ուրախացոյց: Տրտմութիւն քո՝ զհաւաչանս իմ դադարեցոյց: Ձայն ողբոց քոց՝ փող աւետեաց մեզ ամենեցուն յաւիտեանից մեռելոցս: Այս ամենայն առ գերեզմանաւն սուրբ: Իսկ Հրէայքն զի՛նչ, ժողովեցտն առ Պիղատոս և ասեն. տէր յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Ո՞վ մոլեալ հրեայք, մոլորեցուցի՛ջ կոչէք զայն. որ սեամբ լուսոյ առաջնորդէր հարոյն ձերոյ՝ արձակելով զնոսա ի չար ծառայութենէ՝ խստին Փարաւօնի: Մոլորեցուցի՛ջ կոչէք զայն, որ ընդ ծովն Կարմիր առաջնորդէր նախնեաց ձերոյ, և անլնառ անցուցանէր որպէս ընդ դամաք երկիր: Մոլորեցուցի՛ջ կոչէք զբարեգործն հարոյն ձերոց, որ առաջնորդելով նոցա կերակրէր երկնապօղաց մանանայիւն: Արդ՝ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչև յերիս աւուրո, գուցէ եկեալ աշակերտքն գողանայցեն. և ասացեն ժողովրդեան՝ թէ յարեալ: Ա՛նհօրէն և պիղծ հրեայ: Զհարդ հնար է զնա գողանալ, որ նստեալն է ի բարձրութիւնս երկնից ի վերայ աթոռոյ քերովբէական: Ո՛ւր է նա, որ պահէք զթափուր գերեզմանդ: Կամ զիմարդ կարեն գողանալ՝ որ մարդասիրութեամբն իւրով իջեալ ի դժոխս՝ ազատեաց զհարոն մեր ի կապանաց

բանտին: Ասեն, և լինիցի յետին մոլորութիւն չար քան զառաջինն: Ո՞վ անօրէնութեան բանիդ: Զիմրդ էր առաջինն չար, որ աստղն մոգուցն առաջնորդէր միջօրէի՝ առատապէս լուսովն իւրով: Զիմրդ էր մոլորեցուցիչ, յորոյ վերայ լուայք ի Յորդանան՝ զՀօր վկայութիւն և զՀոգւոյն սրբոյ: Իջումն տեսայք աչօք ձերովք, որով դաւանեցաւ Որդի Հօր յերկուց վկայութեանց: Զիմրդ էր առաջինն չար, զոր Կարապետն և Մկրտիչն ի ջուրն Յորդանանու վկայեաց: ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. և դուք լուայք ականջօք ձերովք: Ո՞վ կոյրք, խուլք և անմիտք, այլ զի՞նչ մեծ վկայք սիւսոյ են ձեզ, քան զաստուած և զՀօգին սուրբ ի յերկնից, յաղագս Աստուածութեան, և Մկրտիչն Յովհաննէս ի յերկրէ, վասն ճշմարիտ մարմնոյն՝ որ Աստուածացոյց: Զիմրդ էր առաջինն չար, որ զկոյրսն ձեր լուսաւորէր, զգիւհաւորսն բժշկէր, զբոսորդսն սրբէր, զանդամաւոյծսն կանգնէր, զմեռեալսն յարուցանէր: Սուղ նկանակօքն և սակաւ ձկամբքն, զբազմութիւն ձեր կերակրէր: Զիմրդ էր մոլորեցուցիչ, որ զծովն ռաից իւրոց ճանապարհ պատրաստէր և զչորեքօրեայ մեռեալն յարուցանէր: Լիցի ամեն յետինն չար քան զառաջինն: Զա՞ր լինէր յետինն, զի զմարդիկ հրեշտակս գործէր: Զա՞ր լինէր յետինն, զի զփափեալ գրախոսն բանայր առաջի մարդկան, և յերկինս գնացս առնէր երկրաւորացս: Զա՞ր լինէր առաջինն, զի զանէծան լուծանէր, զփշաբերութիւնն ապականէր, զարտօսրն եւայի փառատէր, զտրտմութիւն Ադամայ ուրախացուցանէր, զդժոխսն աւերէր: զխաւարեալսն լուսաւորէր, զմիջնորդ ցանկոյն քակէր: զարտաքսեալս անդրէն՝ դրախտին քաղաքացի առնէր: Ունիք ասէ զօրականք, երթայք զգուշացարուք որպէս և գիտէք: եւ զիմրդ կարեն պահել զնա զօրականքդ քո ո՞վ Պիղատոս, զոր ոչ կարացին արգելուլ զնա բարապանք դժոխոց դրամբք պղղն՝ ձիւք: Զիմրդ կարեն պահել զնա զօրականքդ քո, յորոյ տեսլենէն զօրութիւնք սանդարամետականացն՝ սուղեցան ի խորս դժոխոցն: Զիմրդ կարեն պահել զնա զօրականքդ քո որպէս մեռեալ, որ մահուամբն իւրով աշխարհի զանմահական կեանս պարգեւեաց: եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կրնքեցին զվէմն հանգերձ զօրականօքն: Ի վեր զգերեզմանն՝ ի վերայ նորա կնքէին, և ի վայր՝ հիմունք դժոխոց ի նմանէ քա-

կեալ լինէին: Ի վեր զգերեզմանն կնքէին՝ և ի վայր՝ շղթայք կապանաց նախնեացն լուծանէին: Ի վեր՝ զգերեզմանն որդիքն պնդէին, և ի վայր՝ հարք նոցա ի դառն տանջանաց դժոխոցն տղատէին: Ի վեր՝ զվէմ՝ գերեզմանին կնքէին, և պահէին, և ի վայր՝ շուքմարանք դժոխոցն ի նմանէ կործանէին: Ի վեր՝ որդիք ապրելոցն ի խորոց ծովուն իբրև զմեռեալ պահէին, և ի վայր՝ իբրև զկենդանի Աստուած զմահացեալսն կենագործէր: Ի վեր՝ ի գերեզմանի ծածկեալ պահէին զնա, որ կանխօք ծածկեաց խորովք ծովուն զհակառակամարտս հարց նոցա ի բռնունթենէ դժոխոց և զխաւարեալսն վերստին լուսաւորէր: Ի գերեզմանն զԱստուած որպէս մեռեալ պահէին, և յերկինս աթոռօք հրեղէնք ի նմանէ դողային: Գերեզմանն երկնաւորաւն երկինք, և երկրաւորաւն ի դժոխս, և պահապանքն զնա որպէս մեռեալ պահէին, և մեռեալքն նովաւ ազատէին: Պահէին ի գերեզմանի զայն, որ յերկինս ի հրեշտակաց փառաւորիւր, և ի դժոխս զբանակս գիւաց հալածէր: Զյարուցեալն ի մեռելոց, որպէս մեռեալ պահէին: Զկենդանարարն՝ որպէս մահացեալ. զանմահն Աստուած՝ որպէս մահկանացու մարդ: Եւ որչափ ևս չարանային՝ անձանց իւրեանց կորուստ առնէին: Եւ էր գործն այն, զոր գործէին. աշխարհի ուրախութիւն, մեռելոց կենդանութիւն, դժոխոց աւերումն, բանտարգելեացն ազատութիւն և յաւիտեանից մեռելոցն յարութիւն: Զխաչափայտն տաշէին, և դրունք դժոխոցն սարսէին: Զբռնեռքն հաւանէին և երկաթի նիւքն խորտակէին: Զերկրորդն Ադամ ընդ խաչն կապէին, և առաջին Ադամայն ի կապանացն արձակումն առնէին: Ստեղծողն անէծք լինէր, և ըստեղծուածքն յանիծիցն ազատէին: Թագաւորին թագաւորաց փուշն պսակ պատրաստիւր, և փշաբերութիւն արմատաքի խրէր. խոցելով զկողն արիւն և ջուր ելանէր, և աղտեղութիւն մեղաց մերոց ջրով աւազանին սրբէր, և մահացու թոյնք վիշապին՝ արեամբն եղծանէր: Մարդ մեռանէր և մահ նորա զամենայն տիեզերս կենդանացուցանէր: Ի Գերեզման իջանէր, և որք ի դժոխս էին յերկինս վերանային. մեռանէր երկրորդ մարդն Ադամ, և կենդանանայր Ադամն առաջին: Լայր Մարիամ, և ուրախանայր Եւայ: Ողբայր Պետրոս, և ողբացեալ Աբէլն զուարճանայր: Տրտմէր Անդրէաս և բերկրէր Նոյ ի տըրտ-

մեութենէն: Լայր՝ Յովհաննէս, և խնդայր Աբրահամ: Սուգ առնոյր Փիլիպպոս և միսիթարէր Իսահակ: Թաղծէր Յակովբոս և հրճուէր Յակովբոս իսրայէլն: Ասացից իսկ պարզաբար, որումէին միտասան առաքեալքն ի ժամ մահու Փրկչին և ուրախանային երկոտասան նահապետքն ի դժոխս: Ողբային Եօթանասուն աշակերտքն և պարէին դասք մարգարէիցն: Գերեզման փորէին, և դժոխք աւերէր, ի վերայ հիմն տրկանէին և հիմունք բանտին կործանէր: Զգերեզմանն պահապանքն պահէին և ի մեռելոյն բարապանք դժոխոցն դողային: Զօրականքն երայեցւոց ի գերեզմանն զնա որպէս մեռեալ պահէին, և զինուորութիւնք մեռելոյն զգօրութիւնք սանդարամեռականացն հալածէին: Գերեզմանն մեռեալ ընդունէր, և դժոխք զնա կենդանի տեսանէր: Պահէին զօրականքն մարդ մեռեալ, և մեռեալն յերկինս կենդանի Աստուած օրհնաբանիւր: Մեռանելովն յեգեմ աւազակին զդրախտն բանայր և ի դժոխս զԱդամ ազատէր: Մեռանելովն արարածք սարսէին, և յարութեամբն զպահապանն զարհուրեցուցանէր: Ընդ մեռանելն նորա՝ եբրայեցիքն ուրախանային, և ընդ նոցա ուրախութեանն՝ դէքն որումէին, և ընդ որումութիւն գիւացն՝ բանտարկեալքն ուրախանային զուարճացեալք, և ընդ ուրախութիւն բանտարգելոցն արարածք ցնծային, և արարածոց ուրախութիւնն՝ յարութիւն մեռելոց էր՝ զոր պահապանքն ի գողանալոյ պահէին: Ո՛վ սքանչեւեացս: Պահապանքն զնա ի գերեզմանին գիտէին, քանզի զվէմն անշարժ տեսանէին, իսկ մեռեալն յարուցեալ և կնիք գերեզմանին անապական մնացեալ: Պահէին մեռեալ, և մեռեալն յարութեամբ իւրով գերկիր շարժեալ՝ և շարժումն զարհուրեցուցեալ զնոսա: Եւ մինչ հայէին զարհուրեալք ընդ բազմութեամբք զինուորութիւնս մեռեալ մարդոյն. զի իբրեւ ծագմունք փայլատականց հիացուցանէին զնոսա: Յայսպիսեաց պահապանաց աշակերտքն երկուցեալք լինէին: Զօրականքն զմեռեալն յաշտկերտացն պահէին, և պաշտօնակիցք աշակերտացն զպահապանն զարհուրեցուցանէին հիացեալք: Եւ մինչ ի տեսլենէ հրեշտակացն զարհուրեալքէին, հուր ծագեցաւ ի խաչեալ թաղելոյն, և լցաւ վայրն լուսով, յԱստուածութենէն, որ ամիսփեալ էր ի մարմնի: Եր լոյս յԱստուածութենէն ի դժոխս և ճառագայթ արփիցն յաչս տե-

սողացն: Ի դժոխս զխաւարեալսն լուսաւորէր, և ի գերեզմանին զաչս պահապանացն իաւարեցուցանէր: Տեսին ի դժոխս մեռեալքն և պարելով ուրախանային, պահապանքն տեսին ի գերեզմանին, և զգետնի հարկանէին: Տեսեալ նախահայրն զլոյսն արարչական և ապականեալն վերստին նորոգեցաւ: Տեսին որ դիք որդւոցն, և վաղվադակի կործանեցան: Ո՛վ հրաշիցս զարմանալեացս: Մինչ հարկանէին զբեւեռսն ի վերայ խաչին՝ ի ձեռսլն և յոտսն ստեղծողին, յայնժամ արձակէին կապանք շրջթայիցն ի դժոխսն՝ ի ձեռաց և յոտից ստեղծուածոցն: Մինչ քակէր ծառայն զբեւեռսն ի ձեռաց և յոտից արարչին, յայնժամ կապեալ լինէին ձեռք և ոտք հակառակորդին: Եւ մինչ մեռանէր Տէրն ի վերայ խաչին, յայնժամ կենդանանային ծառայքն ի դժոխս խորինս: Յորժամ իջանէր Տէրն ի խաչափայտէն, յայնժամ խորտակէր զգիմամարտն ի պատերազմին: Եւ յորժամ իջանէր Տէրն ի գերեզման, յայնժամ վերանայր ծառայն ի փափկուլթիւն դրախտին: Եւ մինչ յարեաւ Տէրն և արարիչն ի դժոխոց, յայնժամ իջեալ Թշնամին ի խորս դժոխոց: Մեծ և սքանչելի են գործք տէրուհականք: Եր ի գերեզմանի, և նստէր ի բարձրութիւն սերովբէից, էր ի դժոխս, և ոչ էր մեկնեալ ի ծոցոյ Հօր: Տեսին զնա նահապետքն ի դժոխս: Տեսին մարգարէքն: Տեսին արդարքն: Տեսին մեղաւորքն: Նկատէին նահապետքն ընդ արդարս, և արդարքն ընդ մարգարէսն, և առ հռոարակ հայէին ընդ Ադամ ամենեքեան: Վասն նմա եկն առեն՝ արարիչն: Վասն ստեղծուածոյն՝ ստեղծիչն: Վասն արարածոց՝ հրաշագործողն: Արդ՝ սա ազատի և մեք տառապիմք: Սա արձակի ի կապանաց և մեք կապեալ միասցուք: Սա ուստի արտաքսեցաւ, անդ լիցի անդրէն քաղաքացի, և մեք տաս կործանեցուք, ուր կործանեցաք ի դժոխս: Լուաւ Արարիչն զայս ամհնայն և ասէ՝ մի այդպէս կարծէք, ո՞վ հօռք իմ բանաւորք, զի ո՛չ է այդպէս, դուք ընդ միմեանս աղմկեալ խռուովիք: Եկի վասն Ադամայ, այլ ո՛չ անտես արարից զձեզ, որք յԱդամայ. և որպէս դուք ի ձեռն դորա աստ ժողովեցոյք ի տեղի տանջանացս, այսպէս ի ձեռն դորա վայելես՞իք վերստին ի դրախտին փափկուլթեանն, որ վասն ձեր պատրաստեցաւ իսկըզբանէ աշխարհի: Եւ իբրեւ լուսն մեղաւորքն զի խօսեցաւ զայս ցնոսա արարիչն, ողբացին սաստկապէս և ասեն, գիտեմք

Տէր և արարիչ, զի ամա եկիր, զոր ստեղծեցեր ձեռք քո մարմին
ի հողոյ, զի զապականեալ անօթն վերստին նորոգեսցես: Զնա-
հապետան ապրեցուցես, զարգարոն ազատեսցես, զմարգարէսն
կեցուցես, զընտրեալսն փրկեսցես ի կապանաց այսց խտազու-
նից, և մեք մեղաւորքս միայն տանջիմք դառնագոյն: Անօրէնքս
և մեղաւորքս միայն վշտանամք ի դառնութիւն գոփսոց: Նո-
քա լուսով Աստուածութեանդ քո պայծառանան, և մեք խա-
ւարմ Գոփոց նսեմանամք: Ո՛չ տեսաք ասեմ ի մէջ նսեմա-
փակ խաւարիս՝ ճաճանչ լուսոյ, ցանկացաք տեսանել զօրիւ, և
ոչ ծագեցաւ առաւօտ մեզ, եւ արդ լուսաւորեցաք յաներէկ
լուսոյ քումմէ, մի զրկեսցուք եղկելիքս և թշուառականքս ի
փառացդ յայգցանէ, զոր յոյժ տենչամք տեսանել: Մի անտես
առնեք զտառապեալքս, որք արժանաւորեցաք միանգամ լու-
սաւորիլ ի լոյս երեսաց քոց: Այժմ՝ արձակեա՛ զնեղեալքս և
փրկեա՛ զգերեալքս, ապրեցո՛ զտանջեալքս և հանգո՛ զվշտա-
ցեալքս: Տեսաք ասեմ զՏէրդ զի յորժամ էիր ի խաչին, գաւա-
զանաւ քո խորտակեցան գրունք գոփոցս: Լուաւ Ադամ
նախահայրն մեր և ազատեցաւ ի գատապարտութենէ փայտին:
Լուաւ եւայ զոռնաձայն քո ի գոփսս և մատուցեալ աւետիս՝
նախաստեղծին ասէ՝ նախ ես լուայ զձայն հրապուրանոց բան-
սարկուին, և կերայ ի պտղոյն և ետու քեզ ուտել՝ ուստի փա-
փագեցաք լինել իբրեւ զԱստուած, և ի փառացն բարձրագունից
զրկեցաք բանսարկուին խաբմամբ: Եւ արդ՝ նախ ես լուայ, զի
Աստուած վասն մեր իբրեւ զքեզ մարդ եղեւ ի կնոջ, որ էր իւ-
րեւ զիս: Եւ արդ՝ լուայ զոռնաձայն նորո՛ւ՝ ո՛չ ի դրախտին, այլ
ի գոփսս, զի գայ, ո՛չ վասն գատապարտութեան մահու, այլ
վասն ազատութեան կենաց: Եւ յորժամ գայս ամենայն լուան
նահապետքն, և ունկնդիր եղեն արգարքն և ուրախացան
մարգարէքն և բերկրեցան ընտրեալքն, ասեմ մեղաւորքն: Մեք
միայն մնացաք տրտմեալք, և զիմօրդ ի դէպ էր նոցա ուրա-
խանալ միայն, որ ի միասին տրտմեաք. նոցա միայն բերկրել և
զուարճանալ, որ ի միասին նստեաք լայաք դառնապէս: Մի եր-
կնչիք ասէ Փրկիչն, զի ո՛չ այդպէս՝ որպէս դուք կարծէք՝ զի
արգար է գատաստանն իմ, ո՛չ նուազագոյնս գործեցից արարիչս՝
քան զարարածս ձեռաց իմոց, քանզի ո՛չ եդի սահման ծագել
զլոյս արգարոց միայն, այլ և մեղաւոր մարդկան: Այսպէս ա-

րարից արդարութեան արեգակնս՝ յորժամ ծագեցայ ի դժոխիս, ոչ եթէ զարդարս և զընտրեալս միայն, լուսաւորեցից, այլ և մեղաւորաց և յանցաւորաց լոյս ծագեցից: Եւ որպէս խաւար դժոխոցդ ոչ եթէ զմեղաւորող միայն ծածկէր, այլ և զարդարսդ: Այսպէս Աստուածութեան իմոյ լոյս, ոչ եթէ միայն արդարոց ծագեցի, այլ և մեղաւորաց: Եւ դարձեալ որպէս արդարքն ոչ եթէ թեթեւագոյն խաւարաւ տանջէին և մեղաւորքն իստագունիւ. այլ առ հասարակ խաւար աղջամղջին զամենեւեան ծածկէր, այսպէս և լոյս Աստուածութեան իմոյ, ոչ եթէ արդարոց առաւել ծագեցի քան մեղաւորացդ, այլ առ հասարակ, բայց պատուով ընտրեսցին, զի եթէ զմեղաւորս ոչ ազատեցից աստի, ապա և ոչ զԱդամ իսկ՝ ուստի մեղքն ծագեցաւ: Եկի այսր զի ազատեցից ի դժոխոցս զԱդամ և ընդ նմին և զամենայն մեղաւորս ազատեցից՝ և քան զերկինս պայծառագոյն գործեցից: Եւ ձայն հրեշտակաց և ձայնք հրեշտակապետաց, ձայնիւ սերովբէից և քերովբէից և ձայնիւ զօրութեանց և իշխանութեանց՝ լցան դժոխք: Որ երգելով աղաղակէին, ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնձութեան: Ուրախացիր Ադամ, և ցնծա եւայ, սպառեաց անէծքն և ծաղկեցաւ օրհնութիւն, քանիկ արտառուք ձեր բարձու և խնդութիւն տարածեցաւ, տրրոմութիւն փարատեցաւ և ի վերայ ամենայն աշխարհի ուրախութիւն սփռեցաւ: Սուգն ի քաց մերժեցաւ, և միսթարութիւն յերկնից ծագեցաւ. բերկրեցարձք արդարք և լցջիք հրճուանօք մեղաւորք: Կենդանասլիք մեռեալք, քանզի մահն մահացաւ, զի Աստուած մարմնով մեռաւ: Դժոխք աւերեաց, զի Աստուած ի գերեզմանի եղաւ: Եղեմ բացիր, զի Աստուած ընդ աւազակս խաչեցաւ: Աւազակ մոռ ի դրախտն, զոր կողն եբաց այսօր: Կապեալք արձակեցարձք, զի ահա Աստուած ի դժոխս: Ուրախացէք մեղաւորք, զի Աստուած վասն մեղաւորաց խաչեցաւ: Զուարճացարձք յանցաւորք, զի Աստուած ընդ անօրէնս համարեցաւ: Քակեաց զհզօրն յԱթոռոյ, զի Աստուած յերկնից յերկիր խոնարհեցաւ: Բարձրացարձք խոնարհք, զի Աստուած ի բարձրութիւնէ փառաց իւրոց առ մեզ էջ: Աղքատացէք մեծաւորնք, զի Աստուած կամօք աղքատացաւ: Քաղցեալք լցցիւք բարութեամբ, զի Աստուած վասն մեր

քաղցեալ։ Խաչ Նորա զդատապարտութիւն խափանեաց։ Բդամիտն՝ զանձն մերկութիւն Ադամայ զգեցոյց։ Փշոյ պսակն՝ ըզփշաբերութիւն երկրի ապականեաց։ Չարչարանքն՝ զտանջեալսն ազատեաց։ Վիրաւորութիւն զվէրսն Ադամայ ըժշկեաց։ Արբու մն լեղւոյն՝ զգառնութիւն ճաշակացն քաղցրացոյց։ Տէգ կողին՝ զխայթոց վիշապին շլացոյց։ Արիւն նորա՝ զծառայն յապականութենէ գնեաց։ Կողահոս աղբերք նորա՝ զաղտեղութիւն լուաց։ Մահ նորա՝ զմահացեալսն կենդանացոյց։ Գերեզման նորա՝ զգրուէս դժոխոց շարժեաց։ Վէմ նորա՝ զգրուէս պղնձիս մանրեաց։ Կնիք վիմին՝ զերկաթի նիգսն փշրեաց։ Կապանք նորա՝ զկապանս շղթայիցն խզեաց։ Վիշտք առաքելոցն՝ զնահապետսն մխիթարեաց։ Իջումն նորա ի գերեզման՝ զխաւարեալսն լուսաւորեաց։ Արդ՝ ուրախ լերուք վշտացեալք։ Մափս հարէք ամենեքեան հանդերձ Ադամաւ։ Բերկրեցարուք կոնայք, և կայթեցէք ձեռք հանդերձ Եւայիւ։ Երգեցէք Դաւթիւ՝ որք ի դժոխս ընդ դասապետս երկնայինս։ Աղաղակեցէք ի միասին և տասնաղեալ երգարանաւ աստացուք։ Երբեք չէ Աստուած և ցրուիցեն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։ Եւ զայս ամենայն իբրեւ լուաւ Ադամ, յարեալ և ասէ, զձայն նորա յնդեմ ասելով՝ Ադամ՝ ո՞ւր ես, և ես ասացի, լուայ զձայն գնալոյ քո ի դրախտի աստ և երկեայ և թաքեայ, քանզի մերկացայ զքեզ։ Իսկ աստ ասացի թէ, լուայ զձայն քո ի դժոխս, և ահա ասիկ իսկ կամ առաջի քո, զի զքեցայց զքեզ։ Անդ լուայ զձայն պատուհասի և ի հող դարձայ՝ ուստի առայ։ Եւ առտ՝ ձայն ուրախութեան լուայ՝ և վերստին դարձայ՝ ուստի անկայ։ Անդ՝ մերկացայ ի փառացն՝ և աստ զքեցայ զշնորհսն։ Ի դրախտն մահ ճաշակեցի և աստ ջուր կենաց արբի։ Ի տեղին զգնելոյն մերկացայ և զտերեւ թրգնելոյն զքեցայ, և ի տեղու խաւարչուտ՝ լուսով ծածկեցայ։ Ի բարձրագոյն տեղուջէն ի դժոխս իջի, և ի խորագունէ ասաի յերկինս վերացայ։ Անդ՝ խոնարհեցայ և աստ բարձրացայ, անդ աղքատացայ և աստ ճոխացայ, անդ՝ խաւարեցայ և աստ լուսաւորեցայ, անդ քաղցեայ և աստ բարութեամբ լցայ։ Ի մէջ աներէկ լուսոյն կուրացայ, և ի մէջ աղջամղջին՝ խաւարի լուսով զարդարեցայ, անդ՝ ի լուսոյն մերկացայ և խաւար զքեցայ և աստ մերկացայ զխաւարն, և զլոյս զքեցայ։ Ի տեղի օրհնու-

թեան անէծք լուայ, և ի տեղի անիծիցս օրհնութեամբ լցայ: Ուր անմահ ստեղծայ՝ անդ մահու ճաշակող եղէ, և ուր ընդ մահուամբ փակեցայ՝ աստ զկենդանութիւն զգեցայ: Ի տեղի նորոգմանն ապականեցայ, և ի տեղի ապականութեան վերստին ստեղծայ: Իբրեւ ասաց զայս ամենայն Ադամ, բարձրացոյց ըզ-
 ձայն և ասէ: Ուրախացիր Աբէլ, և ցնծա՛ Սէթ: Բերկրեաց
 Ենովս և մխիթարեաց Նոյ: Զուարճացիր Աբրահամ և լցջիր
 Տրոսն ու Իսահակ: Մխիթարեաց Յակովբ, սփոփեաց Յովսէփ:
 Խայտա՛ Մովսէս և ձայն աւետեաց ասէ՝ Դաւթի: Խնդա՛ Սողոմոն
 և բարբառեա՛ ծերունւոյն Սիմէօնի: Զայնեա՛ Զաքարիա, զի
 գոչեսցէ՛ Կարապետն, ոչ եթէ՛ ձայն բարբառոյ յանապատի, այլ
 աւետիս ուրախութեան ի դժոխս, ոչ եթէ՛ պատրաստ տռնել
 զճանապարհս Տեառն գալ առ աշխարհս: այլ բարձրելոյն իջա-
 նել ի դժոխս՝ և լուսով իւրով լուսաւորել զխաւարեալքս:
 Պայծառացիր և դու մարգարէութեամբ քո, զի ահա՛ ծագեաց
 մեզ արեգակն արդարութեան ի բարձանց՝ լուսաւորել զնրս-
 տեալքս ի խաւարի և ի ստուերս մահու, և ուղղել գոտս մեր
 ի ճանապարհս խաղաղութեան: Ինեւ զմահ ճաշակեցիք, և արդ-
 ինեւ զկեանս զգեցարուք: Զի Աստուածն իմ և արարիչն վառն
 իմ կամեցաւ իբրեւ զիս լինել՝ առ ի կեցուցանել զիս, և ի ձեռն
 իմ զձեզ զամենեկեան հանելով ի դժոխոց ի բնակութիւն դը-
 րախտին: Խնդացէ՛ք ամենեքեան և ուրախ լերո՛ւք: Կայթեցէ՛ք
 ձեռք արդարք: Մալիս հարէ՛ նահապետք: Պարեցէ՛ք մարգարէք:
 մեղաւորք ընդ մեղաւորս ուրախացարուք, զի այսօր և վասն
 մեղուցելոյս մեռաւ այն որ էր առանց մեղաց՝ էջ ի գերեզնման:
 այն՝ որ էր ի ծոց Հօր, զի զիջեալքս ի գբի ներքնումն՝ ի բարձ-
 րութիւն փառաց իւրոց հանցէ: Զայո ամենայն խօսելով Ադա-
 մայ հանդերձ արտասուօք՝ և ուրախալից սրտիւ: Ինձ այսպէս
 թուի՝ թէ յԱստուծոյ լուաւ այսպէս ի պատասխանի Ադամ:
 Վասն քո ասէ, որ կամեցայ իբրեւ զիս լինել, եղէ ես իբրեւ ըղ-
 քեզ, զի զքեզ իբրեւ զիս արարից: Հրաշագործօղս քո, վառն կոր-
 ծանեալ մարդոյդ, մորդ եղէ: Վասն ծածկելոյդ ընդ թզեն-
 եաւն՝ ի խանձարուրս պատեցայ: Վասն կործանելոյդ ի բարձ-
 րագոյն փառաց՝ ի մնուր անբանից եդայ: Վասն սքսորելոյդ ի
 դրախտէն՝ ի յեգիպտոս փախեայ: Վասն աշխատութեանց քոց-
 վաստակեցայ: Վասն անիծից քոց անէծք եղէ: Վասն ի շնոր-

Հաց մերկանալոյն քո փայտիւ ի վերայ խաչին տարածեցայ, Վասն յանցանաց քոց՝ ընդ անօրէնս համարեցայ: Վաս մահուան քո՝ զմահ ճաշակեցի: Վասն իջանելոյդ ի դժոխս՝ ի գերեզման եդայ: Եւ որդ՝ լուսաւորեաց մեռանելոյն իմոյ՝ խաւարեալդ: Կենդանացի՝ անշնչութեամբս իմոյ՝ մահացեալդ: Ուրախացի՝ չարչարանօքս իմոյ՝ տրտմեալդ: Զգեցի՝ մերկանալով իմոյ՝ մերկացեալդ: Ես իսկ ձեռօք իմոյք կայայ զձեռանէ քումմէ՝ որով ստեղծի զքեզ, և դժւ, կոչեա զամենեւեան, որք ի քէն ծնան՝ զկնի քո. և ուրախութեամբ եկայք ամենեքեան՝ վայելիցէ՝ յարեալութեան իմում՝ փառաւորելով զՀայր փառակից և գէակից սուրբ Հոգին, որոյ կամաւ մատուցայ պատարագ վասն ձեր: Եւ ապա Աբամայ բացեալ զբերան իւր՝ օրհնեաց զԱստուած և ասէ. օրհնեալ ես Տէր Աստուած, որ յայց ելիք մեղուցեալ ծառայիս քո: Եւ արդարքն աղաղակէին ասելով՝ օրհնեալ Որդիդ միածին: Եւ նահապետքն զձայնս իւրեանց բարձրացուցեալ տսէին, օրհնեալ Հոգիդ սուրբ փառակից: Վասն զի հաճութեամբ Հօր Որդին մարմնացաւ, Հոգին սուրբ հովանի եղև, և մեք ազատեցաք ի դառնութենէ դժոխոյս: Այս ամենայն ի դժոխս կատարէին: Իսկ ի գերեզմանին զլոնչ արդեօք լինէին, զլոնչ խորհուրդ մեծ և ահաւոր: Կնքեցին ասէ զգերեզմանն հանդերձ զօրականօքն և զգիշերն ամենայն զգուշութեամբ պահելով: Եւ տեսանէին զսպասաւորս մեռելոյն փայլեալ անդ՝ ահաւոր հրաշիւք որպէս փայլատակունս հրոյ: Այնմ որ ի գերեզմանի եղաւ որպէս մեռեալ, հրաշունչ երևէին սպասաւորք նորա, և զօրականքն ի յահէ անտի նոցա՝ անշնչացեալ կացուցանէին: Տեսեալ զօրականացն զբազմութիւն երկնաւորացն ի գերեզմանի անդ. և ասէին, զլոնչ է այս, զոր տեսանեմք ի գերեզմանի աստ, այր մի մեռեալ պահեմք, զի յաշակերտաց իւրոց մի գողտողի, և տեսանեմք իջեալ ի սպասաւորութիւն սորա՝ հրեղէնք բոցափայլք: Մարդ սպանաք, և սպասաւորք սորա են իբրև Աստուծոյ: Եւ իմացաք, որ վասն մեռեալ մարդոյս դողալին լերինք և բլուրք. և պատուեցան վէմք: Սա ի գերեզմանս, և երկիր շարժեցաւ: Սա ի գերեզմանս, և պահապանքս որպէս զմեռեալ եղաք: պահապանք գերեզմանին այսպէս զարհուրէին: Եւ սատանայ և զօրք իւր յամօթ լինէր ասելով՝ վայ մեռանելոյն Աստուծոյ: Ո՛հ անմութեան հրէիցն: Սատանայ զմորմ-

նուցեալ բանն Աստուած դաւանէ, և նոքա պարծէին, եթէ յաղթեցաք որդւոյն Մարիամու՝ որ անձնաճառ կամօք Աստուածացաւ: Նոքա իբրեւ զմարդ սպանին: և Յովսէփ և Նիկողեմոս իբրեւ զԱստուած պատուեցին: Երանի՞ք է ձեզ Յովսէփ և Նիկողեմոս, ծածուկ աշակերտք Քրիստոսի: Դուք երկինք իբրեւ առաքեալք, դուք երկրաւորք՝ իբրեւ երկնաւորք: Համարձակեցայց ասել զսոսա բազմաչեաց քերովբէս և վեցթեան սերովբէս, և բաժանելով զպատիւն՝ ըստ գոյիցն, զի գերագոյն պատիւ քան զհրեշտակացն ընկալան, զի հասին նոքա ի գլուխ այնմ, որ բարձրագոյն է քան զերկինս, յորում ոչ կարեն հպել հրեշտակք, զոր թեաքօղեալ յահէ փառաց երեսաց նորոտ անմարմինքն ծածկէին զչէմն իւրեանց ի լուսոյ Աստուածութեան նորա, ձեռք մարմնաւորացն արժանի եղեն մերձենալ ի նա, և ոչ պարզաբար հասանել, ոյլ շօշալիեալ և պատեալ զնա կտաւովք: Երանի՞ք է ձեզ Յովսէփ և Նիկողեմոս, որ զԱստուածացեալ մարմինն զայն՝ որոյ ձայնն զգերեզմանս երաց, և զմեռեալս յարոյց և զվարագոյր տաճարին ցեղեաց, և զվէմն պատառեաց, դուք պատեալ ի՞նչիցիք ի գերեզման: Արդ՝ զգերեզմանն սուրբ, որպիսի՞ գովութեամբ փառաւորեսցուք: Ի սինեայ Աստուածութիւնն իջանելով՝ ծածկիւր մառախլսւ և ամպով, և սիւն հրեղէն առաջնորդելով՝ Երբայեցուցն՝ ազատեալ զնոսա ի չար ծառայութենէ խոտին Փարաւօնի: Եւ առ սա իջեալ Աստուածութիւն միացեալ մարմնովն և լուսով Աստուածութեան իւրոյ զյաւիտենից ննջեցեալսն ազատեալ ի դառն տանջանաց դժոխոցն: Անդ Մովսէս գաւազանաւ հանէր յեգիպտոսէ և անցուցեալ ընդ ծովն Կարմիր՝ առաջնորդէր յանապատն: Եւ աստ Քրիստոս իաչիւն եհան զգերեալսն ի դժոխոցն և անցոյց ընդ խաւարն աղջամլոյն, և տարսւ ընդ իւր յարքայութիւն անդնաց ոտիւք: Անդ մանանայն յերկնից գայր, և կերակրեալքն զկերակրողն մեռացոն և արձանս կռոց կանգնեցին: Եւ որդիք ապրելոցն զբարեգործն իւրեանց իբրեւ ղչարագործ՝ իաչի մատենցին և սպանին, եւ աստ հացն կենաց աշխարհի պարգեւեցաւ, և կիրակրեալքն նովաւ զկռապաշտ մոլորութիւն արհամարհեցին՝ խոստովանելով Աստուած զչարչարեալն և զխաչեալն՝ փառաւորելով ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ յաւիտեան: Յանապատին ի վիմէ Զուր բղետեաց և վէմն էր ինքն Յիսուս: Եւ աստ

ի կողէն իջնելոյն ի գերեզման ել ջուր, և ջուրն էր ինքն Բրիստոս ըմպողքն անտի մեռան, և աստի որք մկրտեալք, կենդանայան: Գերեզման, և կենդանեաց բնակարան: Գերեզման և մեռելոց յարուժիւն: Գերեզման, և դժոխոցն աւերող: Գերեզման, և սգաւորաց մխիթարութիւն: Գերեզման, և տեղի երկնաւոր հարսանեաց: Գերեզման և առաքաստ զարգարեալ: Գերեզման և արեւմուտք արեգականն: Գերեզման, և երկինք լայնագոյն: Գերեզման, և հաստատութիւն անվայրափակ: Գերեզման, և տեղի լուսոյն անմատոյց: Գերեզման, և թարձող կենդանատուին: Գերեզման, և նորոգող աշխարհի: Գերեզման, և քաւարան մեղաւորաց: Գերեզման, և դրախտ ծաղկազարդ: Գերեզման և քան զեգեմ պայծառագոյն: Սա, ապաւէն աշխարհոցոց: Սա, ապաշխարութիւն մեղաւորաց: Սա, բնակարան Աստուծոյ յերկրի: Սա, հաւասար Աթոռոյն Աստուծոյ յերկինս: Սա, գլուխ եկեղեցւոյ: Սա, Սիւն հաւատոյ: Սմա պաշտեն քահանայք: Սմա երկրպագանեն հրեշտակք: Ի սմա ընթանան տիեզերք ամենայն: Եւ ի սմա իջանեն պաշտել՝ երկնաւորք ամենայն: Սա, երկինք՝ և արարածք ի սա հասանին: Սա, յերկրի և հրեշտակք ի սա իջանեն: Ի սա մոտեալ արեգակն արդարութեան, և ի սմանէ ծագեալ լոյսն անմատոյց ի մէջ խաւարի դժոխոցն: Սա եղև պատճառ սգոյ, և ի սմանէ արեւաւ աւետիս յուսոյ: Սա տեղի վշտաց, և ի սմանէ բղխեաց ուրախալի ցնծութիւն: Ի սմանէ ստեղծաւ մարդն առաջին, ի չգոյից կենդանի, և ի սմա թաղեցաւ երկրորդ մարդն, որ Տէրն է ամենայնի: Ի սմա դարձաւ ուստի առաւ մարդն, և ի սմանէ յորեաւ մարդն երկրորդ և զառաքինն կենդանացոյց: Ի սմա տալիսնեցաւ մարդն առաջին, և ի սմա նորոգեցաւ ի ձեռն երկրորդին: Սա, գիշեր անառաւստ որդւոց մարդկան, և Սա տիւ աներեկոյ, ուստի խաւարեալքն լուսաւորեցան: Սա ամպ և մառախուղ՝ որով արգարութեան արեգակն ծագեցաւ, և Սա առաւստ լուսապայծառ՝ որով աշխարհս ճառագայթեցաւ: Ի սմա եղաւ փրկագարծն մեր Բրիտոս իբրև մարդ մահացեալ և ի սմանէ յարեաւ Աստուածապէս մարմնովն առեղեալ, որ է ահաւոր սերովբէից և քերովբէից և ամենայն անմարմնական զինւորութեանց. ընդ որում՝ Հօր և սուրբ Հոգւոյն, փառք յաւիտեանս ամէն: